

Պարույր Սևակ

Անվերնագիր 11

Աշնան եղյամն է իջել ձորերին,
Քարին ու թփին - ամենո՛ւր իջել:
Մեր ջահել, մատղաշ մեր խնձորենին
Սպիտակել է, ինչպես տատն իմ ծեր:
Գոմում երինջն է բառաչում տխուր,
Մինչդեռ մարագում խուրձն է առվույտի:
Երդիկն ու հայրս չիբուխ են ծխում:
Շունը կլանչով ելնում է ոտի:
Դու, չստեր հագած, վազում ես բակով,
Թռչում ես առուն, ինձ ես որոնում:
Ես, ոտաբոբիկ, ձեռքիս մահակով
Եղյամն եմ թափում մեր խնձորենու:
Ուրախ բառաչ է բարձրանում գոմում՝
Պահածո դարձած խուրձի հոտերից:
Ա՛խ այդ հայացքը, որ դու ես գամում
Եղյամից սառած բոբիկ ոտերիս...
Ցուրտ է: Թոնիրն է բորբոքվում ներսում:
Ախ այդ հայա՛ցքը... Ձմեռ է արդեն,
Մինչդեռ չգիտես, չէ՛, ի՛նչ եմ ասում,
Գիտես՝ արբունքի գարունն է մեր դեմ...

21.V.1946թ. 21.VII.1953թ.

Յատուկ Պոէմ

Երևան Նավչալու